

Հայերենի երկու գրական լեզուաճիւղերի առնչակցութեան խնդիրները

Համաշխարհայնացման այս ամենակոյլ դարաշրջանում, երբ մեծ ու հզօր ազգերի լեզուները ինքնաբերաբար ստանում են միջազգային լեզուի կարգավիճակ, *ճնշում են փոքրաթիւ բնակչութեամբ ազգերի լեզուները, դրանց մատնելով ձուլման կամ կորուստի*: Գաղութատերերը, նուաճած ազգերին ենթարկելու առաջին միջոցը համարել են սեփական լեզուի պարտադրանքը՝ ձուլելու համար բնիկների լեզուն: Սակայն, միւս կողմից այդ «փոքր» ժողովուրդները երբեմն աւելի փարուելով իրենց վտանգուած լեզուին, դիմում են ամէն միջոցի՝ *պահպանելու ազգային հոգեւոր արժեհամակարգի հիմքերի հիմքը՝ սեփական լեզուն*, որովհետեւ, ինչպէս միշտ կրկնել ենք, *ազգապահպանում՝ նշանակում է լեզուապահպանում եւ որ՝ ազգի պատմութիւնը սկսում է լեզուի պատմութեամբ*: Եթէ մեռնում է լեզուն, վերանում է նաեւ ազգը: Մեր դէպքում, պետական լեզուի կարգավիճակով ապահովութիւն ստացած արեւելահայերենի առկայութիւնը եւ խորհրդային տարիներին հայրենիքի կողմից արեւմտահայութեան, (սփիւռքի), նրանց մշակոյթի ու լեզուի՝ արեւմտահայերենի նկատմամբ խտրական ու անարդարացի քաղաքականութիւնը յանգեցրել էր մեզ մօտ եւս ունենալու «փոքր» համարուող լեզուի կորուստեանը սպառնացող նոյն պատկերը: Եթէ կորցնենք այդ «անկարելի» համարուած արեւմտահայերէնը, կը կորցնենք նաեւ այդ լեզուն կրողներին՝ ազգի մեծ հատուածին: Արեւմտահայերէնի ճոխ ու կատարեալ լեզուն հայրենիքի կողմից ժամանակին անտեսուելու եւ անպաշտպան ու լուսանցքային վիճակում թողնելու արդիւնքում այսօր *համազգային լեզուական հիմնախնդիր է դարձել ո՛չ միայն արեւմտահայերէնը փրկելը, այլեւ այդ լեզուաճիւղը մերձեցնելը արեւելահայերէնին: Ինչու՞ պէտք է պահպանել արեւմտահայերէնը եւ դեռ մտահոգուել այդ երկու լեզուաճիւղերի մերձեցման հիմնախնդրով: Փորձենք պատասխանել* (փաստերը ուղղելով նաեւ սփիւռքահայերի եւ նրանց լեզուի նկատմամբ այսօրուայ անբարեացակամներին):

Մերձեցման նպատակադրումը եւ արեւմտահայերէնը

Ազգապահպանման համար լուծման սպասող մեր երկու լեզուաճիւղերի մերձեցումը համազգային հիմնախնդիրներից մէկն է եւ անկախ մերձեցման հնարաւորութիւններից, աւելի կարելոր է մերձեցման հանդէպ մեր դրական վերաբերմունքը: Հայրենիք-սփիւռք մերձեցումները սկսուել էին դեռ խորհրդային ժամանակներից՝ 20-ականներից, բայց դա՝ հիմնականում *նիւթական ոլորտում*, ինչի կարիքը զգում էր հայրենիքը: Սակայն սփիւռքը երկատուեց՝ մերձեցումի՝ այդ ոչ քաղաքական հարցում երկրի վարած սխալ, կողմնապահ (մանաւանդ դաշնակցութեան նկատմամբ) քաղաքականութեան եւ հայրենիքի հանդէպ թեր եւ դէմ կողմնորոշումների հիմքով: Իրականում *հոգեւոր մերձեցումը, ինչի կարիքն ունէր սփիւռքը, կատարուելու էր լեզուական հիմքով միայն, եւ մենք ողջունում ենք այս թեմայով համաժողովը կազմակերպողների ճիշդ կողմնորոշումը*: Մեր ելակէտային դրոյթները հետեւեալներն են.

1) Լեզուական երկու ճիւղերի *մերձեցման* այս քննարկուող հարցը պէտք է լինի ո՛չ թէ ժամանակաւոր նպատակների հերթական քայլ, այլ *ազգային գաղափարախօսութեան մէջ լեզուական քաղաքականութեան մշտական եւ գերակայ խնդիր*: Մինչդեռ, առ այսօր մենք չունենք լեզուական քաղաքականութիւն կամ լեզուի զարգացման հեռագնայ հայեցակարգ: Չունենք լեզուի օրենսդիր (համակարգող) մարմին, որը կարող էր լինել ցայսօր չգործող լեզուի բարձրագոյն խորհուրդը: ԱՄՆ-ի «Մեսրոպեան Ուխտ» լեզուապահպանական միութիւնը մամուլով եւ բաց նամակներով բազմիցս առաջարկել է ստեղծել այդպիսի մի մարմին՝ սփիւռքահայերի մասնակցութեամբ՝ երկու հատուածների մերձեցումը ապահովելու համար:

2) Մերձեցումը այլևս բացառում է շրջանառությունից հանել և լուսանցքային կարգավիճակ տալ անհետացող գրական արեւմտահայերէնին, ինչը կիսով չափ կ'աղքատացնէր մեր ազգային արժեւամակարգը: Սփիւռքահայերի կարծիքով՝ արեւմտահայերէնի մերձեցման խնդիրը չպէտք է նպաստի նրա՝ արեւելահայերէնի մէջ լուծուելուն (նաեւ՝ հակառակը): Հետեւաբար՝

3) **Արեւմտահայերէնի պահպանման և հետագայ պաշտպանման խնդիրը քննարկուող հարցի երկրորդ երեսն է, քանզի գրական արեւմտահայերէնը վաստակել է պահպանուելու և ազգի երկու հատուածների կողմից մշտապէս պաշտպանուելու իրաւունքը, որովհետեւ.**

ա) Երբ գրաբարին և միջին հայերէնին փոխարինելու եկաւ աշխարհաբարը, ժամանակային առումով **մեր առաջին աշխարհաբար գրական լեզուն արեւմտահայերէնն էր՝** ստեղծուած Պոլսոյ բարբառի հիմքով:

բ) Արեւմտահայաստանը և նրա լեզուն ընդգրկում էին մեր երկրի 3/4 մասը և բացի Կովկասեան արեւելահայաստանից, **արտաքին աշխարհում՝ Եւրոպայից մինչեւ Հնդկաստան, Ամերիկաներից մինչեւ Մերձաւոր Արեւելք ու Աֆրիկա, իբրեւ հայերէն լեզու՝ հիմնականում ճանաչում և գործածում էին արեւմտահայերէնը:** Նախկինում և այսօր էլ Միխիթարեան հայազէտներն ու արտասահմանեան հայազգիտական միւս կեդրոնները, օտարազգի հնդեւրոպական լեզուազէտները **շարունակում են կիրարկել արեւմտահայ գրական լեզուն:**

գ) Արեւմտահայերէնով (և նրա կիրառած դասական ուղղագրութեամբ) են **հիմնականում կապուել** մեր ազգային պատմութեան տարբեր ժամանակաշրջանները, աշխարհացրիվ մեր ժողովրդի տարբեր հատուածները, ազգի տարտեղնուած զաւակների տարբեր սերունդները, այդ սերունդների ստեղծած **գիտա-մշակութային և հոգեւոր կեանքի** տարբեր դրսեւորումները:

դ) Արեւմտահայերէնով ստեղծուել է **համաշխարհային չափանիշերով բարձրակարգ գրականութիւն**, ինչը դեռ նոր է սկսում մարսել արեւելահայ հատուածը:

ե) Երկար ժամանակ **արեւմտահայերէնով է կատարուել** մեր ազգային արժեւամակարգի, իմաստութեան ու փորձի հիմնական մասի ծանօթացնելն ու ներկայացնելը աշխարհին և ապահովուել այդ արժեքների փոխանցման շարունակականութիւնը (Ալիշան և այլ միխիթարեաններ, Արշակ Զոպանեան, Կոստան Զարեան և ուրիշներ):

զ) Ի հակադրութիւն **Խորհրդային տարիների** քաղաքականութեան, երբ միմեանցից հեռացուել էին արտասահմանի «բուրժուական» և Հայաստանի «սոցիալիստական» հայերը, այսօր մեր պետական նոր դոկտրինը յայտարարում է, որ **հայրենիքը հզօր է սփիւռքի հետ միասնութեամբ:** Սա ենթադրում է **հայրենիքի ներկայութիւնը սփիւռքում և սփիւռքի ներկայութիւնը հայրենիքում:** Այդ սփիւռքը պարտաւոր ենք պահպանել և դա՝ առաջին հերթին նրա գործածած լեզուի՝ **արեւմտահայերէնի պահպանման միջոցով:** Իսկ որպէս պահպանման յուսալի միջոց, մենք տարբեր առիթներով բազմիցս շեշտել ենք, որ **գրական արեւմտահայերէնը կարող է յարատեւել, եթէ այն «բնակեցուի» Հայաստանում:** Դրա համար հարկաւոր է՝ **հայրենիքում երկու լեզուաճիւղերը գործածունեն հաւասար իրաւունքներով թոյլատրել սփիւռքահայերին՝ գրագրութիւնները հայրենիքում վարել արեւմտահայերէնով, դպրոցներում սկսել արեւմտահայերէնի դասաւանդումը, մամուլի էջերում ունենալ արեւմտահայերէնով սիւնակներ, թատրոններում (կամ բարբառային յատուկ ստեղծուած թատրոններում)՝ արեւմտահայ (սփիւռքահայ) հեղինակներին բեմադրել ճիշտ առողջանութեամբ հնչող ներկայացումներով, հեռատեսիլով սփիւռքի համար տրուող հաղորդումները մատուցել արեւմտահայերէնով, սփիւռքահայ (արեւմտահայ) հեղինակների գրքերը հրատարակել հեղինակի լեզուով, արեւմտահայերէն, առանց թարգմանելու արեւելահայերէնի:** Եւ վերջապէս, սփիւռքի դպրոցների ուսուցիչների վերապատրաստումը և «Արի տուն» ծրագրով դասական սփիւռքի երեխաների ուսուցումը բացառապէս անել արեւմտահայերէնով. **ցաւօք, այս հայաստանեան ուսուցումների և արտագաղթի պատճառով սփիւռքում առաջացել է անկատար արեւելահայերէնով ու աղճատուած արեւմտահայերէնով մի խառնածին «հայերէն» լեզու:**

4) Սովորաբար **ազգի յարատեւման առաջին պայմանը՝ ընդհանուր և միակերպ լեզու ունենալն է:** Այդպիսի լեզու էր դարերով գոյատեւած գրաբարը (այդ ժամանակ Միւսաց Գրիգոր Տաթեւացին և

Վասպուրականի Գրիգոր Նարեկացին չէին կոչում արեւելահայ կամ արեւմտահայ): Ցաւօք, այսօր այլեւս հնարաւոր չէ *միասնականացնել*՝ այսինքն *միակերպ խօսել եւ միակերպ գրել* արեւմտահայերէն եւ արեւելայերէն գրական լեզուներով, ուստի խօսում ենք դրանց ոչ թէ միասնականացման, այլ մերձեցման մասին միայն, մանաւանդ որ, վերացուեց նաեւ միակ միասնականը՝ համագգային աւանդական ուղղագրութիւնը, դրանով դառնալով աշխարհում *միակ ճերմակ ագռաւը*, երբ նոյն ազգը գրում է երկու տեսակի ուղղագրութեամբ: Այսօրուայ լեզուական տագնապը ստիպում է մեզ դեկավարուել նաեւ յայտնի իմաստութեամբ՝ **«Հարկը կը լուծէ օրէնքը»**: Ընդունում ենք, որ երբեմն, աւելի գերադասելի է **լեզուի**

գրաւորի միակերպութիւնը, քան ճշգրտութեանը գերի լինելը: Դրանով պակասում է գրաւորի սխալագրութեան հաւանականութիւնը եւ ստեղծում է մատչելի ու գործնական միակերպ գրաւոր, ինչը նոյնպէս յարատեւման պայման է: Մերձեցման համար կարելի է գտնել որոշ ընդհանրութիւններ, որոնք հնարաւոր են եւ պէտք է *կանոնակարգել*՝ որքան էլ որ դա վիճաբանական լինի: Դրանք են՝ --**Երկակի գրելաձեւերի հարցը** : Որպէս օրինակ դիտարկենք գրաբարում եւ Հայկազեան բառարանում թոյլատրուած եւ այսօր սփիւռքում գործող երկակի գրելաձեւերը՝ որոնց տարբերակներից մէկը գրաբարում համարուել է **ռամկական**: Չմոռանանք, սակայն, որ այդ **ռամկական համարուածը այսօրուայ աշխարհաբարն է**, հետեւաբար նաեւ **ընդունելի**: Բերենք արդէն *դասական* դարձած հետեւեալ օրինակները, որոնք լեզուի ինստիտուտի արեւմտահայերէնի բաժնին կից սփիւռքի խմբի մի քանի անդամներս առաջարկում ենք կանոնակարգել. *օրինակ՝ «գմբէթ» (Է)-ով* գրաբարեան ձեւը այսուհետեւ գրել **«գմբէթ», (Ե)-ով**, ինչպէս *արեւելահայերէնում է*, քանի որ մնացած բոլոր բառային փոխակերպումները գրւում են **Է-ով՝ գմբէթածածկ, գմբէթակիր, գմբէթագարդ** եւ այլն: Կամ՝ **«Ճիշդ»** բառի գրաբարեան գրելաձեւը (**դ-ով**), գրել **«տ»-ով՝ «Ճիշտ»**, նոյնպէս *արեւելահայերէնի* ձեւով, քանի որ բառային միւս փոխակերպութիւններում ունենք **ճշգրիտ, ճշմարիտ, ճշտապահ, ճշմարտախօս** եւ նման այլ գրելաձեւեր (**տ-ով**). սրան յաւելենք, որ հայերէնում ընդունուած արտասանական դիւրութեան պատճառով **«շղ»-ն** դարձել է **«շտ»**-- **միշտ, վիշտ, հեշտ, հաշտ, դաշտ** եւ այլն, աւելացնենք նաեւ **ճիշտ-ը**: Արեւմտահայերէնում ունենք **«գունտ» եւ «գունդ»** երկակի ձեւերը, իսկ *գրաբարում եւ արեւելահայերէնում՝* միայն **«գունդ»** ճիշտ ձեւն է տրուած, հետեւաբար *արեւմտահայերը* պէտք է նոյնպէս ընդունեն դա, ինչի շնորհիւ կը մերձենան արեւելահայերէնին: Գրաբարեան մի այլ **«արձագանգ»** բառի դէպքում՝ **«արձագանգ» (գ-ով)** գրելաձեւը պահպանուել է միայն *արեւմտահայերի* մօտ. իսկ *արեւելահայերի* կիրառած **«արձագանք» (ք-ով)** գրելաձեւը Հայկազեան բառարանում նշում է որպէս **ռամկական ձեւ**, ինչն էլ հէնց *աշխարհաբարն* է եւ ուրեմն՝ ընդունելի: Հետեւաբար *սփիւռքահայերը* նոյնպէս կարող են այդպէս գրել (**Ք**)-ով, կամ հայաստանցիները՝ **Գ-ով**՝ յանուն լեզուական *մերձեցման*: Արեւմտահայերէնում ունենք **ո-օ** գրերի գործածման **երկակի ձեւեր՝ Կարո-Կարօ, Մարո-Մարօ, Դրո- Դրօ, Համո-Համօ, զերո-զերօ** : Քերականորէն ճիշդ են առաջինները (**ո**). (անունների դէպքում սահմանուած է առանց յ-ի գրելաձեւը, իսկ երկրորդների՝ **օ-ի** դէպքում չկայ դրա գրաբարեան հիմքը՝ **աւ-ը**): Երկակի եւ այլ շեղումներով գրութեան օրինակները շատ են. դրանք մանրամասն ներկայացուած են Ա. Եղիայեանի «Ուղեցույց» աշխատութեան մէջ, օրինակ՝ **բզքտել- բզկտել, փնտռել- փնտրել, բաղդ- բախտ** եւ այլն:

-- **Օտար անունների տառադարձման խնդիրը**: Որոշ **Ե-Է երկակի գրելաձեւով անունները բխել են յունարէնով կամ եբրայերէնով գրուած աստուածաշնչեան անուններից. Երուսաղեմ-Եղէմ, Եզեկիել- Իսրայէլ, Բարսեղ- Սամուէլ, Յաբեթ-Սանուէլ, Մուշեղ- Միքայէլ**, որոնց մի մասը՝ առաջինները **Է-ով**, միւս մասը՝ **Ե-ով** են (բացառութեան կարգով յարգելի են արդէն նուիրական դարձած որոշ անուններ): Թերեւս համաձայնուենք Արմենակ Եղիայեանի հետ՝ նորօրեայ օտար անուններում լատինական **Է** գիրը բացառապէս **Ե-ով** գրելու առաջարկին (արեւելահայերի պէս)՝ **Ռուբեն, Արսեն, Եսթեր, Վիլեն, Արտեմ, Ռոմեն, Օդէթ** եւ այլն: Այնուհետեւ. սփիւռքահայերը յաճախ *լատինական C-ով սկսուող անունները* գրում են **Գ-ով**, իսկ արեւելահայերը՝ **Կ-ով**, ինչպէս օրինակ. **Գանադա (Քանադա)-Կանադա, Գալիֆօրնիա (Քալիֆօրնիա)-Կալիֆօրնիա**: Այստեղ եւս կան նուիրական դարձած եւ փոփոխման ոչ ենթակայ անուններ. **Cilicia- Կիլիկիա, citron-կիտրոն, caecar-կեսար, Cyprus-Կիպրոս**: Պէտք է կանոնակարգել նաեւ լատին **W-V** եւ հայերէն **Ու-Վ** գրերի միակերպ գրութեան խնդիրը: Այսպէս. Տերմինաբանական կոմիտէի

տեղեկագրում վերջին ժամանակներում յանձնարարում է **Washington. William. whisky** բառերը գրել Վ-ով՝ **Վաշինգտոն, Վիյամ, վիսկի** (ինչպես արեւելահայերէնում է, ինչը պետք է փոխել). որովհետեւ *արեւմտահայերը* գրում են աւելի ճիշդ՝ **Ուաշինգթոն, Ուիյամ, ուիսկի**: Միւս կողմից, նոյն տեղեկատուն խորհուրդ է տալիս գրել **Ուիլսոն , Ուոլտեր** եւ ոչ թե՛ **Վիլսոն, Վոլտեր**: Արեւմտահայերէնում հանդիպում ենք անբացատրելի շեղումների. օրինակ **«ամբիոն»** բառը այդ նոյն ձեւով՝ **բ**-ով տրուած է գրաբարում եւ արեւելահայերէնում, բայց արեւմտահայերէնում գրում է՝ **«ամպիոն»** ձեւով (**պ**-ով): Ենթադրելի է, որ այդպէս են գրում **«ամփիոն»** չարտասանելու համար (գիտենք, որ **բ**-ն՝ **փ** են հնչում), իսկ սխալ արտասանութիւնը ժամանակի ընթացքում փոխում է նաեւ գրաւորի տեսքը: Մէկից աւելի գրաձեւերով բառերի ուղղագրութիւնը կարելի է կանոնակարգել՝ ընտրելով չարիքից փոքրագոյնը: Օրինակ՝ արեւմտահայերէնի բաժնին կից սփիւռքի խմբի անդամներս (Ա. Եղիայեան, Վ.-Ա. Արթինեան Վ.Վարդանեան եւ այս զեկոյցը ստորագրողս) որպէս ելակէտ ընդունում ենք, որ **մերձեցման հիմքում պետք է կիրառել չորս մօտեցում** .

---Միակերպ գրութիւն հաստատելու համար նպատակային, ոչ էական շեղումների դիմել՝ աւելորդ եւ անհարկի բազմաձեւ գրելակերպերը պակասեցնելու համար (տես երկակի գրելաձեւերը):

---Հիմք ընդունել բառերի իմաստաբանական կողմը, օր. արմ.հայ *զգածուիլ*-ը (բառի իմաստն է՝ իր մէջ կրել, համարկել, տե'ս Հայկազեան, Մալխասեանց) եւ *զգացուել*-ը (ընկալել-արլիայ նորաբանութիւն), կամ՝ **գուրկ եւ զերծ** (ծնողագուրկ , վնասագերծ. տես Ա. Եղիայեանի «Ուղեցոյց»ը):

---Քերականական տարբերուող որոշ կանոններ հնարաւորինս հարմարեցնել մերձեցման խնդիրների լուծմանը: արեւմտահայերէնում այսօր ընդունուած է դերանուն եւ թուական խօսքի մասերը համարել ածականներ, ինչը վերցուած է դեռեւս հնուց՝ Դիոկղետիանոսի յունական քերականութիւնից, սակայն աւելի ընդունելի է Հր. Աճառեանի նկարագրած՝ մեր 9 խօսքի մասերը:

--Ազգի երկու հատուածների հետ համատեղ լսումներով քննարկել դասական ուղղագրութեան հարցը:

5) Մերձեցումները պետք է լինեն երկուստեք համագործակցութեամբ ու հանդիպակաց քայլերով, փոխըմբռնման ու փոխդիջման հիմքով եւ հաւասար դիրքերից: Մենք մերժում ենք ակադ. Զահուկեանի այն յայտարարութիւնը, թե՛ լեզուական հարցերով պետք է զբաղուի միայն Հայաստանը, որովհետեւ սփիւռքը չունի լեզուն հովանաւորող պետական հիմնարկ եւ գիտական հաստատութիւն: Իրականում մենք ընդունում ենք արտերկրի մտաւորականների (հայագիտական կեդրոնների, միախառնեանների եւ լեզուի սփիւռքահայ մասնագէտների) ներուժը եւ ակնկալում ենք նրանց աջակցութիւնը՝ ԳԱԱ լեզուի ինստիտուտի արեւմտահայերէնի նորաստեղծ բաժնին:

Արեւելահայ եւ արեւմտահայ գրական լեզուների **մերձեցումը մենք հիմնաւորում ենք հետեւեալ փաստարկումներով.**

Ա) Որպէս օրուայ հրատապ պահանջ՝ ու միջոց՝ ազգի երկու հատուածների համար այդ ձեւով ստեղծում է աւելի մատչելի եւ փոխադարձ հասկանալի կապ: Աւելին, սփիւռքահայը հայաստանում ինքզինքը չհասկացուած եւ մեկուսացուած չի զգայ:

Բ) մեր բառային ֆոնդը կամ բառապաշարը հարստացնելու եւ պահպանելու համար երկու գրական լեզուաճիւղերում հաւասարապէս կ'օգտագործուեն արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի նոյնիմաստ բառերը (*սպիտակ-ճերմակ, շտապել-աճապարել, թթուել-աշխել, համարել կամ ենթադրել--սեպել, պախարակել-այպանել, լաւ-աղէկ, ցամաքել-սմբիլ եւ այլն*):

Գ) Արեւելահայ նոր սերունդը կը կարողանայ ծանօթանալ ազգային եւ արտերկրի գրադարաններում, ազգային պահոցներում (արխիւում) պահուող նիւթերին եւ բնագրով կարդալ արեւմտահայերէնով գրուած գրական (նաեւ պատմական եւ այլ գիտական) ժառանգութիւնը եւ հակառակը:

Դ) Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի մերձեցումով սկսւում է գործնական քայլեր առնելը՝ երկու հատուածների՝ հայրենիք-սփիւռք մերձեցման գաղափարի իրականացման ճանապարհին:

Ե) Արդի արագընթաց գիտատեխնիկական նոր եզրոյթների հայերէնացման գործընթացում ապահովութիւն ենք ունենում միեւնոյն օտար բառերի համար միատեսակ հայեցի տարբերակի գործածումը՝ սփիւռքում եւ հայրենիքում. օրինակ՝ աղեթափում (սփիւռքում) եւ ճողուածք (Հայաստանում) բառերը. ճողուածքը աւելի ճիշդ է եւ ընդհանրական իմաստ ունի, կամ՝ կատարակտ եւ ակնաքող:

Է) Մերձեցումների համար կարելուք քայլ կը լինի **Մելգոնեանի փոխարեն հայրենիքում սփիւռքի համալսարան** հիմնելը, ինչը կ'օգնի սփիւռքահային՝ արեւելահայերի մէջ ապրելով ու լեզուն տիրապետելով, նաեւ արեւմտահայերէնի գիտակ կադր դառնալուն:

Ը) Թերեւս խնդրոյ առարկայ **մերձեցումը** օգտակար լինի նաեւ հետագայում մեր երկու լեզուաճիւղերի համար **միասնական տառադարձութիւն ստեղծելուն** ուղղուած ջանքերին:

Մերձեցման մարտավարութիւնը պահանջում է **համազգային հարցերին սփիւռքի ներկայացուցիչների մասնակցութիւն** եւ ընդգրկում՝ հայրենի հանապատասխան օղակներում: **Լեզուական որոշումները** մեր բազմադէմ **սփիւռքում կիրառելու համար** հարկ է գիտաժողովի անունից դիմել Արամ Ա Վեհափառին եւ **համագործակցել նրա ստեղծած՝ «Արեւմտահայերէնի պահպանման յանձնախմբի»** հետ:

Անշուշտ, կարող են լինել նաեւ ա'յլ փաստարկներ՝ հիմնաւորելու լեզուական մերձեցման կարելուքիւնը: *Այստեղ հարեւանցիօրէն ասենք նաեւ, որ դպրոցներում գրաբարի հիմունքների ուսուցումը (ինչպէս հին յոանարէնը՝ Յունաստանի դպրոցներում, լատիներէնը՝ Եւրոպայի բուհերում, կամ 2000 տարի մոռացուած եբրայերէնը՝ Իսրայելում), կը նպաստի եկեղեցում «Հայր մեր»ի աղօթքը կամ միւս արարողութիւնները հասկանալի դառնալուն, նաեւ Մատենադարանի նիւթերին հասու լինելուն: Միաժամանակ, մերձեցման գործում գրաբարը երկու ճիւղերի համար շաղկապող դեր կ'ունենայ, որովհետեւ մեր երկու լեզուաճիւղերը սնուել են մեր այդ առաջին գրական լեզուից:*

Մերձեցման իմաստով մենք կարելորդում ենք նաեւ որոշ հարցերում **արեւելահայերէնի կանոնարկման** եւ արեւմտահայերէնի հետ ընդհանրութիւններ ունենալու հարցը: Պէտք է լուծել արեւելահայերէնում քերականական անհարմարութիւնները եւ վերացնել մերձեցմանը խանգարող անհարկի տարբերութիւնները: Այսպէս օրինակ. միշտ էլ դասական ուղղագրութեամբ սփիւռքում կը մասնիկը գրուել է բառից առանձին՝ **կը կորչի, կը կերակրի, կը քանդուի**: Արեւեանը կը մասնիկի փոխարեն բառարմատին կցեց **կ-ն**, բառերը դարձնելով՝ **կկորչի, կկերակրի, կքանդուի**: Այս դէպքում խաթարում է **աւանդական բառապատկերը**, իսկ միասին արտասանութիւնը հնարաւոր չլինելով, հնչում է (եւ տողադարձում է) անջատ **կը-ով**: Աւելի սարսափելի են այս կանոնով գրուող ապառնի ժամանակի այն բառերը, որոնք սկսւում են **երկու կ-ով**, առաջացնելով **երեք յաջորդական կ-եր. կկոցել- կկկոցեմ, կկզել (կկուզ նստել)- կկկզեմ, կկչել (ծաղկել, բացուել)-կկկչեն, կկոց(ջուլիակի սարքի մաքոք)-կկկուի** (հէնք՝ հինէլ), **կկոռշ (չորանալ)-կկկոռշուի, կկղել (կակուղ դառնալ)-կկկղի** եւ այլն: Դիտարկենք մի այլ դէպք՝ կապուած ապաթարց նշանի չկիրառման հետ (օրինակները տես՝ նախադասութիւնների ձեւով). **Կուզի սապատը գերեզմանը կ'ուղղի** եւ նա **կուզի (կ'ուզի)միանալ մեզ. Կուտի պատճառով կեռաս չի ուտում** բայց **կուտի (կ'ուտի) քաղցր հատապտուղ, կուրանայ (կ'ուրանայ) ճշմարտութիւնը** եւ **կուրանայ** աչքը (կոյր դառնայ):

Լեզուի օրէնսդիր մարմինը

Լեզուական քաղաքականութիւնը պէտք է կենսագործուի **լեզուի բարձրագոյն խորհրդի մէջ** ընդգրկուած **մասնագէտների միջոցով**. նրանք պէտք է օժտուած լինեն լայն լիազորութիւններով եւ համարուեն լեզուի օրէնսդիր մարմին: Այդ մարմնի մէջ պէտք է ընդգրկել նաեւ արեւմտահայերէնին գիտակ գրականագէտների, իսկ սփիւռքը պէտք է ներկայանայ ձայների 50\50 հարաբերակցութեամբ՝ հաւասար թուով ձայների եւ ձայների հաւասարութեան սկզբունքով: ԱՄՆ-ի «Մեսրոպեան Ուիստ» միութեան անունով բազմիցս առաջ ենք քաշել **համազգային կամ համահայկական լեզուական մարմին ստեղծելու հարցը**: *Այսօր ժամանակն է սկզբունքօրէն լուծելու* մերձեցման համար կարելուք մի հարց՝ բառեգրաբանական (տերմինաբանական) մարմնի խնդիրը եւ դրա հետագայ ճակատագիրը, ինչն անտեսուած է վերջին տասնամեակում: Հարկաւոր է հասնել այն բանին, որ **միջազգային օտար եզրոյթների հայեցի համարժեքները ստեղծուեն սփիւռքի հետ համատեղ, նոյն ընդհանրական եզրով**, ինչը կը նպաստի ոչ միայն միակերպ գրութեանը , այլեւ **մերձեցման գործին**: Խորհրդային ժամանակներում գործող տերմինաբանական կոմիտէն *օգտակար շատ որոշումներ հրատարակեց*. Սակայն հետագայում այդ մարմինը կորցրեց իր գլխադասային վիճակը եւ անուանափոխումների ու կառուցուածքային ձեւափոխումների հետեւանքով *վերածուեց կոյր աղիքի*: Մերկապարանոց յայտարարութիւն արած չլինելու

համար յիշենք նշուած փոփոխութիւնները, կրած անունները. ահա դրանք՝ *Կառավարութեանն աորնթեր պետական կոմիտէ, Կառավարութեանն աորնթեր հայերէնի բարձրագոյն խորհուրդ* (անուանափոխում), *Կառավարութեանն աորնթեր լեզուի պետական տեսչութեան հայերէնի բարձրագոյն խորհուրդ*, (աւելացաւ նոր օղակ լեզուի պետական տեսչութիւնը), *ՀՀ կրթութեան եւ գիտութեան (կգ) նախարարութեան լեզուի պետական տեսչութեան հայերէնի բարձրագոյն խորհուրդ* (այսինքն՝ կառավարութեանը փոխարինեց կրթ. եւ գիտ. նախարարութիւնը.): Այս վերջին լեզուական կառոյցը, որ գործում է առայսօր, կորցրեց նախկին ենթաստորագայութեան (սուբօրդինացիայի) մակարդակը՝ կառավարութեան կից լինելը, եւ ենթադրում է, որ *որոշումները ընդունում է հայերէնի բարձրագոյն խորհուրդը, հրամանագրում է լեզուի պետական տեսչութեան պետը, իսկ վերջում հաստատում է կրթ. գիտ. նախարարը* (անկախ վերջինիս լեզուագէտ լինել-չլինելուց): Նշենք նաեւ, որ այդ կոմիտէի 2006 թ. հրատարակուած «Տեղեկատու» միւլտիմեդիայի ատեն ներկայացնում ու մեկնաբանում է նախորդ տարիների (սկսած 1956-ից) ընդունուած որոշումները, ստեղծելով մի խառնաշփոթ վիճակ, որովհետեւ, երբ որեւէ էջում կարդում ես բառերը, ստիպուած թերթում ես ամբողջ տեղեկատուն՝ իմանալու համար, թէ այդ բառերը ունի՞ հետագայ ճշգրտում (մի էջում տրուած «**Ժուրնալիստ**» եզրը մի ուրիշ, աւելի ուշ բացատրականով տալիս է «**լրագրող**» բառը, սակայն այդ բառին յաջորդող էջում պահպանուել է **բալետմէյստեր** եւ **ռեժիսոր** եզրերը, թէւ կան դրանց հայերէն համարժէք պարուստյց եւ դերուստյց բառերը: Չի տրուած «**կոնֆերանս**» եւ «**ասամբլեայ**» օտար եզրերի հայերէն համարժէքները: Անհրաժեշտ է նոր կազմուող համապատասխան մարմնի կողմից հրատարակել ներկա պահի դրութեամբ նորագոյն մի տեղեկատու՝ բոլոր բառերի վերջնական ընդունուած միակ տարբերակով եւ դա բաժանել բոլոր դպրոցներին ու բուհերին, խմբագրութիւններին ու տեղեկատուական միջոցներին (այլապէս ո՞վ պիտի խանութից գնի եւ կարդաւ): Այս դէպքում պետք է նաեւ խմբագրել նախկին՝ կիրառում չգտած անյաջող եզրերը. օրինակ՝ որպէս «**դէպրեսիա**» բառի համարժէք, տեղեկատուի յանձնարարած «**իջոյթ**» եզրը պետք է փոխել սփիւռքում յաճախ օգտագործուող «**ընկճախտ**» բառով: Մեր կարծիքով այսպիսի վիճակում հնարաւոր չէ սփիւռքի եւ հայրենիքի մերձեցնումը: Ու՞մ վրայ հենուի սփիւռքը, երբ հայրենիքում առաւելապէս գործածուում են օտար բառեր, լեզուի պետական տեսչութիւնը անգործունէայ է (իրականում այս մարմինը պետք է վերահսկի լեզուի բարձրագոյն խորհրդի որոշումների կատարումը միայն, ոչ թէ եզրոյթ ստեղծի), իսկ կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը չի կարող լեզուական մաքրութիւն պահանջել իրեն հաւասար կարգավիճակ ունեցող միւս նախարարութիւններից: Կրկին անգամ յոյս յայտնենք, որ այդ կառոյցը կը քննարկի ոչ միայն հայրենիքում, այլ նաեւ սփիւռքում ստեղծուած եւ օգտագործուող բառերը, դրանք օրինականացնելով ու տարածելով երկու հաստուածներում՝ որպէս համարժէք օգտագործուող ընդհանուր հայկական բառապաշարի եզրոյթներ: Նման կառոյց կարելի է ստեղծել հենց այս կամ այսպիսի մի համաժողովի ընթացքում եւ ներկայացնել ուր որ անկ է: Գոյութիւն ունեցող անտերութեան պատճառով, յաճախ նոյն բառերը գործածուում է նուրբ տարբերութիւն ունեցող դէպքերում: Վերջերս հրատարակուած նորաբանութիւնների բառարաններում յաճախ համաժողով եզրը օգտագործել են թէ՛ **կոնֆերանս**, թէ՛ **ֆորում** բառերի համար: Եթէ չթարգմանենք, վարժուենք այսօրուայ օտարաբանութիւններին, ապա մեր լեզուի համարժէք բառերը կը սկսեն մեզ խորթ թուալ, մեր բառերը հայերէնի բառապաշարի փոքր մասը կը կազմեն եւ մեր լեզուն չի զարգանայ: Միշտ յիշենք, որ «**Ծմօր կաթը աւելի լաւ չէ հարազատ մօր կաթից** (արեւելահայ գրող՝ Խ. Աբովեան): Եւ որ ---- **Լեզուն պետք է լինի գուտ տոհմիկ. մոտայի համար լեզու ստեղծողները պատասխանատու են ապագային** (արեւմտահայ բանաստեղծ Ռուբէն Որբերեան):

Թերեւս մերձեցման համար բերուած հարցադրումները ոմանց համար վիճելի լինեն: Մենք չենք հաւակնում, որ բոլոր ներկաները կը մտածեն մեզ պէս, բայց հաւակնում ենք, որ ներկաները կը հաւատան մեր մէկ ընդհանուր նպատակին: *Պլատոնը Արիստոտելին ուսուցում էր*, որ հարցերը պատասխաններից աւելի կարեւոր են: Նոյն տրամաբանութեամբ, մերձեցման թեմայի առթիւ *հնչեցրած հարցադրումներն են աւելի կարեւոր*, ինչն ստիպում է մեզ փոխադարձ զիջողութեան հիմքով գտնել դրանց պատասխանները՝ լուծելու համար բոլոր հարցերը, միշտ յիշելով, որ՝ *նպատակը արդարացնում է միջոցները*:

Որպես հետգրություն

Սփիւռքի դպրոցներում մայրենիի ուսուցման հարցի առթիւ

Սփիւռքի հայեցիությունը պահպանելու համար Ա) պէտք է ստեղծել համահայկական կրթական մի մարմին, որը պէտք է ստեղծի գրագետ ծրագրեր, ղեկավարի դպրոցների աշխատանքը եւ դպրոցներին զերծ պահի համայնքային ու եկեղեցական հատուածական, անջատական եւ կողմնակալ ազդեցություններից, միացնելով նոյն տարածքում գործող դպրոցների աշակերտներին ու ուսուցիչներին: Բ) Բարեգործական հիմնադրամները ուղղել կրթական ասպարէզ՝ պակասեցնելու աշակերտներից գանձուող գումարները եւ բարձրացնելու համար ուսուցիչների աշխատավարձերը՝ հաւասարեցնելով տուեալ տարածքի տեղական (օտար) դպրոցների ուսուցիչների աշխատավարձերին:

Նոյն